Կարգապահական գործ թիվ ԿԳ-15025

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/172-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի,Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Հարություն Հարությունյանի, Երվանդ Վարոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ փաստաբան Արտակ Քոչարյանի և փաստանամ Աննա Թամազյանի,

քննության առնելով փաստաբան արտակ Քոչարյանին (արտոնագիր թիվ 673) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

2015 թվականի մարտի 18--ին ՀՀ փաստաբանների պալատ (այսուհետ՝ Պալատ) է մուտքագրվել Փաստաբան Աննա Թամազյանը (այսուհետ՝ նաև Դիմող) դիմումը: Փաստաբան Աննա Թամազյանը (այսուհետ՝ նաև Դիմող)՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ Պալատ) հայտնել է, որ սույն թվականի հունվարի 30-ին քաղաքացի Վարազդատ Գյոզալյանը դիմել է իրեն, որպեսզի ստանձնի նրա որդու՝ Վռամ Վարազդատի Գյոզալյանի պաշտպանությունը, որը գտնվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում՝ իրեն մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 3-րդ և 8-րդ մասերով նախատեսված արարք կատարելու համար:

Սույն թվականի փետրվարի 5-ին Վռամ Գյոզալյանը դիմում է ներկայացրել իր պաշտպան, փաստաբան Արտակ Քոչարյանից հրաժարվելու մասին:

Դիմողը նշել է, որ Արտակ Քոչարյանը զարմանալիորեն չի վերցրել քրեական գործի նյութերը, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանից ստանալով քրեական գործի նյութերը՝ Դիմողը պարզել է, որ երբ Վռամ Գյոզալյանը 2013 հուլիսի 9-ին ինքնակամ ներկայացել է նախաքննական մարմնին և տվել բացատրություն իր կողմից կատարված արարքի վերաբերյալ, իր բացատրության մեջ նշել է, որ

տուժողին մարմնական վնասվածք հասցնելու ժամանակ մտադրություն չի ունեցել սպանելու նրան, այլ ընդամենը վախեցրել է, այն պարզ պատճառով, որ վեջինս սեռական բնույթի հայհոյանքներ է տվել իր ծնողներին և իրեն: Իսկ դանակը որպես գործիք օգտագործելու ժամանակ բռնել է դանակի շեղբից, այլ ոչ թե կոթից, որպեսզի շատ չվնասի տուժողին, և շեղբը բռնելու հետևանքով վնասել է իր ձեռքի ափը և ցուցամատը:

Դիմողը նշել է, որ փաստաբան Արտակ Քոչարյանը գործին ներգրավվել է 2013 թվականի հուլիսի 10-ին և ոչ մի միջոց չի ձեռնարկել գործով նման ապացույցը հաստատելու համար, այսինքն՝ դատաբժշկական փորձաքննություն անցկացնելու համար:

Դիմողը նաև նշել է, որ ձերբակալվածներին պահելու վայրում Դիմողի պաշտպանյալի անձնական խուզարկության և մարմնի զննման ժամանակ նախաքննական մարմինը նույնիսկ համապատասխան ձևաթուղթ չէր լրացրել, ինչի կապակցությամբ փաստաբան Արտակ Քոչարյանը ոչ մի գործողություն չի կատարել, չգիտակցելով, որ Վռամ Գյոզալյանին մեղսագրվող արարքի համար դա շատ կարևոր ապացույց է:

Դիմողը նաև նշել է, որ հետագայում նախաքննական մարմինը և դատախազությունը «պնդեցրել են» գործում չեղած ապացույցները, այն է՝ բազմաթիվ տեղեկանքներն առ այն, որ տուժողը շատ ծանր է, վիրահատվել է, ընդհանուր անզգայացում է ստացել, այնինչ՝ դատական նիստի ժամանակ պարզվել է, որ ընդամենը կատարվել է վերքի մշակում և տուժողը ընդամենը 3 օր է մնացել հիվանդանոցում:

Դիմողը նաև հայտնել է, որ երբ վաշխառության հատկանիշներով քրեական գործ է հարուցվել, իսկ տուժողը չի ժխտել դա, սակայն քրեական գործը կարճվել է, իսկ փաստաբան Արտակ Քոչարյանը չի բողոքարկել նշված որոշումը:

Դիմողը գտել է, որ փաստաբան Արտակ Քոչարյանը դատավարական գործողություններին իր ներկայությամբ ուղղակի իր ստորագրությամբ օրինականացրել է նախաքննական ոչ օբյեկտիվ, անօրինական, ոչ բազմակողմանի քննություն անցկացնելը, ինչի արդյունքում իր պաշտպանյալը անազատության մեջ է 2013 թվականի հուլիսի 10-ից մինչ օրս:

*Դիմողը նաև նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում իր կողմից միջնորդություն է կատարվել գործով հերթապահ բժշկին հրավիրելու և որպես վկա լսելու համար, քանի որ դատաբժշկի և մասնագետ-բուժող բժշկի դատարանում տրված ցուցմունքներն իրար հակասում էին: Դիմողի միջնորդությունը մերժվել է նախագահող դատավորի կողմից այն պատճառաբանությամբ, որ պաշտպանական կողմը և ամբաստանյալը օբյեկտիվորեն բավավար ժամանակ և հնարավորություն են ունեցել պաշտպանությունը կազմակերպելու համար:**Ըստ Դիմողի՝ փաստաբան Արտակ Քոչարյանի անգործության արդյունքում իր պաշտպանյալի վիճակը վատթարացել է:***

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը 2015 թվականի ապրիլի 18-ի թիվ ԿԳ-15025 որոշմամբ Փաստաբան Արտակ

Քոչարյանի (արտոնագիր թիվ 673) նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.6.1 և 2.7.2 ենթակետերի խախտման հատկանիշներով "Քաղաքացի Վռամ Գյոզալյանին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու (ձեռնհասություն չցուցաբերելու) և թիվ 14134613 քրեական գործի շրջանակներում մեղադրյալ Վռամ Գյոզալյանի նպաստավոր շահերից չբխելու վարքագիծը ստուգելու նպատակով:

29.04.2015 թվականին փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի նախապատրաստումը հանձնարարվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Անահիտ Սարգսյանին՝ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի համաձայն եզրակացություն կազմելու համար:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u> Դիմողը 2015 թվականի հունիսի 24-ին ինձ՝ կարգապահական գործ նախապատրաստող անձիս, տվել է բացատրություն հետևյալ բովանդակությամբ.

Հարց 1. Որտեղից եք ճանաչում ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Արտակ Քոչարյանին և ինչպիսի հարաբերությունների մեջ եք գտնվում նրա հետ:
Պատասխան- Արտակ Քոչարյանին ընդհանրապես չեմ ճանաչել, շփում չի եղել մեր միջև: առաջին անգամ նրա հետ ծանոթացել եմ վերաքննիչ դատարանում Վռամ Գյոզալյանի գործով դատաքննության ժամանակ ընդամենը մի 5-10 րոպե: Դրանից հետո որևէ շփում չի եղել:
Հարց 2. Ինչպիսի հարաբերությունների մեջ եք գտնվում մեղադրյալ Վռամ Գյոզալյանի ու նրա ընտանիքի անդամների հետ: Ով է Ձեզ հրավիրել մասնակցելու Վ.Գյոզալյանի գործով որպես պաշտպան և ինչ հիմունքներով:
Պատասխան- Շատ լավ հարաբերությունների մեջ եմ թե Վռամի, և թե նրա հարազատների հետ: Ինձ դիմում է ներկայացրել հայրը և վճարովի հիմունքներով պայմանագիր է կնքվել հոր հետ:
Հարց 3. Ինչու Ձեր դիմումը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ավելի շուտ չէիք ներկայացրել, ասենք, օրինակ՝ մինչև ՀՀ վերաքննիչ դատարանի դատարանի կողմից որոշումը կայացնելը, չէ որ Ձեզ համար մինչ այդ արդեն իսկ ակնհայտ էր Ա.Քոչարյանի անգործության հանգամանքը:
Պատասխան- Մինչ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից վճիռ կայացնելը Վռամի մայրը՝ Ժաննան, իմ կողմից տեղեկանալով գործում եղած Արտակ Քոչարյանի վերաբերյալ անգործության փաստերից, դիմում է գրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին: Արտակ Քոչարյանը հրավիրվել է փաստաբանների պալատ և տվել է բացատրություն, որի արդյունքում կարգապահական վարույթ չի հարուցվել: Այդ իսկ պատճառով արդեն ավելի ուշ, պալատի պատասխանը ստանալուց հետո մանրամասնորեն իրավաբանորեն շարադրելով փաստերը՝ դիմում ներկայացրեցի պալատ:
Հարց 3. Ինչ նկատառումով եք գրել դիմումը /ինչ նպատակ եք հետապնդել/:

Պատասխան – Վռամ Գյոզալյանի շահերից ելնելով՝ դիմում եմ ներկայացրել պալատ, քանի որ եթե կարգապահական վարույթը հարուցվեր և ավարտվեր այն փաստի հաստատումով, որ Արտակ Քոչարյանը իսկապես պատշաճ չի իրականացրել իր պաշտպանյալի շահերի պաշտպանությունը, ապա դա ինձ հիմք կտար որպես նոր երևան եկած հանգամանք բեկանել որոշումը և հետ ուղարկել նոր քննության:

Հարց 4. Ըստ Ձեզ, որն է Արտակ Քոչարյանի հիմնական և ամենակարևոր բացթողումը, որը էականորեն ազդել է քրեական գործի լուծման վրա:

Պատասխան – Դա Արտակ Քոչարյանի կողմից Վռամ Գյոզալյանի մոտ ձեռքի ափին առկա վնասվածքի վերաբերյալ /որը առաջացել է դանակի շեղբից բռնելու հետևանքով/ դատաբժշկական փորձաքննության չներկայացնելն է, քանի որ այդ փաստի բացթողումը էականորեն ազդում է մեղադրանքի որակման վրա ՀՀ քր. օր-ի 112-րդ հոդվածի վերաորակումը նույն օրենսգրքի 34-104-րդ հոդվածների:

Դիմողը Խորհրդին տվել է նույնաբավանդակ բացատրություն:

Դիմողը գործի քննության ընթացքում սակայն խնդրել է գործի վարույթ կարճել, քանի որ Պատասխանողի գործողությունները պայմանավորված են եղել իր պաշտպանյալի ծնողների կողմից արգելք հանդիսանալը:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Արտակ Քոչարյանը 2015 թվականի ապրիլի 4-ին ներկայացրել է գրավոր բացատրություն, որի համաձայն գտել է, որ դիմող Աննա Թամազյանի պնդումներն առ այն, որ նա անգործություն է ցուցաբերել և չի կատարել իր պարտականությունները, անհիմն են և և իրականությանը չեն համապատաս-խանում: Արտակ Քոչարյանը գտել է, որ Աննա Թամազյանը վատաբանելով իր կատարած աշխատանքը, փորձում է Վռամ Գյոզալյանի հարազատների մոտ վարկանիշ ձեռք բերել: Նա նաև նշել է, որ Աննա Թամազյանը, տեսնելով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժել է իր կողմից բերված վերաքննիչ բողոքը, նման կերպ փորձում է ամբողջ կատարվածը բարդել իր վրա: Նա նաև գտել է, որ Վռամ գյոզալյանի պաշտպանությունիրականացրել է միայն պաշտպանյալի շահերից ելնելով, գիտակցելով նրան առաջադրված մեղադրանքի լրջությունը և նախաքննության և դատաքննության ընթացքում պատշաճ կատարել է իր պարտականությունները:

Փաստաբան Արտակ Քոչարյանը 2015 թվականի հունիսի 24-ին ինձ՝ կարգապահական գործ նախապատրաստող անձիս, տվել է բացատրություն հետևյալ բովանդակությամբ.

Հարց 1. *Որ թվականից եք ստանձնել Վռամ Գյոզալյանի շահերի պաշտպանությունը:*

Պատասխան- 2013 թվականի հուլիսի 10-ից:

Հարց 2. *Որտեղից եք ճանաչում Վռամ Գյոզալյանին, ինչպիսի հարաբերությունների մեջ եք գտնվում նրա հետ և ինչպես եք ստանձնել նրա շահերի պաշտպանությունը:*

Պատասխան- Ճանաչում եմ ծնված օրվանից, քանի որ Վռամ Գյոզալյանը իմ մտերիմ ընկերոջ՝ Կարեն Գյոզալյանի եղբոր որդին է: Անձամբ ճանաչում եմ նրա հորը՝ Վարազդատ Գյոզալյանին, մի խոսքով՝ նրանց ամբողջ ընտանիքի մտերիմ անձնավորությունն եմ: Ինձ դիմել է նրա հողեղբայրը և խնդրել է, որպեսզի ստանձնեմ նրա շահերի պաշտպանությունը, որն, ի դեպ, իրականացրել եմ անվճար հիմունքներով:

Հարց 3. *Ի սկզբանե քրեական գործը հարուցվել է ՀՀ քր.օր-ի 112 հոդվածի 1-ին մասով, այսինքն Վ.Գյոզալյանի կողմից Գ.Կարապետյանին ծանր մարմնական վնասվածք հասցնելու դեպքի առթիվ, որով էլ Վ.Գյոզալյանին առաջադրվել է մեղադրանք, սակայն հետագայում մեղադրանքը փոփոխվել է ավելի ծանր մեղադրանքով և Վ.Գյոզալյանին առաջադրվել է նոր մեղադրանք ՀՀ քր.օր-ի 34-104 հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 8-րդ կետերով: Այսինքն, նախաքննական մարմինը, Ձեր պաշտպանյալին մեղադրել է արդեն շահադիտական դրդումներով կատարված սպանության փորձի համար, որը զուգորդվել է մարդուն առևանգելով:*

Ինչ կասեք այդ մասին: Որպես պաշտպան ինչ եք արել Դուք, ինչպիսի գործողություններ եք կատարել առաջադրված մեղադրանքից Ձեր պաշտպանյալին պաշտպանելու համար:

Պատասխան- Ի սկզբանե, ստանձնելով պաշտպանությունը, հանդիպեցի Վռամ Գյոզալյանի հետ, որը պատմեց դեպքի մանրամասները, որը, ինչպես հետագայում պարզվեց, իրականությանը չէր համապատասխանում: Մասնավորապես, նա ինձ ասաց, որ դեպքը տեղի է ունեցել իրենց շենքի բակում, սկզբից վիճաբանել է տուժող Գ. Կարապետյանի հետ, վերջինս իրեն և իր ծնողների հասցեին հայհոյանքներ է հասցրել, որից հետո ինքը նրան ասել է՝ իջնենք ստորգետնյա ավտոտնակ, հայրս այնտեղ է, նրա հետ խոսա, հետո իջանք, որտեղ նրան իմ մոտ եղած փոքրիկ հուշանվերային դանակով մի քանի հարվածներ եմ հասցրել: Նրան լսելուց հետո ես մշակեցի պաշտպանական մարտավարություն՝ նրան բացատրելով, թե նա ինչպիսի ցուցմունքներ պետք է տա նախաքննական մարմիններին: Սկզբում նրան բացատրել եմ, որ առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քր. օր-ի 112-րդ հոդվածը իր հատկանիշներով շատ մոտ է ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի հատկանիշներին և հենց սկզբից պետք է այնպիսի ցուցմունքներ տա, որ բացառվի սպանության դիտավորությունը: Ցուցմունքները տրվել են հենց այդպես, որ իրենք տուժողի հետ նախկինում ունեցել են գումարային պարտք ու պահանջի հետ կապված հարցեր և այդ օրը տուժողը եկել է իրենց շենքի բակ իր հոր հետ հանդիպելու պատրվակով և վիճաբանություն է եղել: Ի դեպ նշեմ, որ այդ մարտավարությունը մշակեցինք նրա հետ միասին դեռևս մինչև նրա պաշտպանությունը ստանձնելը, քանի որ մինչև մեղայականով ոստիկանություն ներկայանալը հորեղբոր՝ Կարեն Գյոզալյանի հետ միասին եկել էլ իմ գրասենյակ: Խոսակցությանը ներկա էր նաև հորեղբայրը:

Նախաքննության ընթացքում տուժողը Գ. Կարապետյանը նախաքննության մարմնին հանձնեց մեքենայի խցիկում տեղադրված վիդեոձայնագրման սարքի ձայնագրությունը, որից պարզ դարձավ, որ դեպքը իրականում տեղի է ունեցել այլ շենքի ստորգետնյա ավտոտնակների մոտ և Վ. Գյոզալյանը տուժողին դանակով հարվածներ է հասցրել մեքենայի խցում՝ ընթացքի ժամանակ և մեքենայից դուրս: Այսինքն՝ դեպքը ինձ ճիշտ չէր ներկայացվել Վ. Գյոզալյանի կողմից:

Նախ և առաջ, փոխեցի պաշտպանական մարտավարությունը, որը կայանում էր հետևյալում՝ քանի որ ձայնագրության մեջ հստակ երևում էր, որ սկզբում չկա ոչ հայհոյանք և ոչ էլ՝ գումարային հարցեր, ես խորհուրդ տվեցի, որպեսզի ցուցմունք տա, որ տուժողը իր հասցեին հայհոյանքներ է տվել հեռախոսով իրենց ծանոթացնող անձի հետ հեռախոսով խոսալու ժամանակ:
Ցուցմունքները սկսեցին կառուցվել Վռամ Գյոզալյանի ծնողների հասցեին տուժողի կողմից անձնական հայհոյանքներից ելնելով, այսինքն՝ Վ. Գյոզալյանը նպատակ է հետապնդել պատժել՝ վախեցնել տուժողին՝ իրեն և իր ծնողներին հայհոյանքներ հասցնելու համար:
Վ. Գյոզալյանը անձամբ դիմում գրեց քննչական բաժնի պետին՝ նշելով, որ չի առարկում, որ տուժող Գ. Կարապետյանի նկատմամբ վաշխառության հոդվածով հարուցված քրեական գործի կարճման դեմ և խնդրեց նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել: Դա նույնպես մարտավարական մշակված պլան էր, որը բխում էր Վ. Գյոզալյանի շահերից, որպեսզի բացառվի շահադիտական նպատակներով նրան վնաս հասցնելը, այսինքն՝ մենք բացառում էին նրանց միջև գումարային հարաբերությունները և տոկոս վճարելու փաստը և պնդում էին, որ նրանց միջև եղել է առևտրային գործարք՝ առուվաճառքի պայմանագրով Վ. Գյոզալյանը Գ. Կարապետյանին է վաճառել իրեն սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը:
Մեղադրանքը վերաորակելուց հետո ներկայացրել եմ միջնորդություն քննիչին, այնուհետև՝ վերադաս դատախազին, որ համաձայն չեմ առաջադրված մեղադրանքի հետ և միջնորդել եմ փոխել՝ վերաորակել արարքը որպես ծանր մարմնական վնասվածք հասցնել: Ի դեպ նշեմ, որ այդ ընթացքում մեղադրանքի ծավալում էր ոչ միայն սպանության փորձը, այլ նաև առանձին մեղադրանք էր առաջադրվել անձին ազատությունից զրկելու հոդվածով: Ես իմ պաշտպանական գործողությունների միջոցով հասա նրան, որ այդ հոդվածը հետագայում՝ նախաքննության ընթացքում հանվեց:
Նախաքննության ընթացքում ես գործել եմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմ լիազորությունների շրջանում միայն իմ պաշտպանյալի շահերից ելնելով: Նշեմ, որ փաստաբանի գործողությունների նախաքննության ընթացքում սահմանափակ են:
Ինչ վերաբերում է արդեն դատարաններում իմ գործողություններին, ապա նորից նշեմ, որ ես արել եմ ամեն ինչ, որպեսզի իրականացնեմ պաշտպանյալիս արդյունավետ պաշտպանությունը և առկա են դատական նիստերի ձայնագրման կրիչները, որտեղից ակնհայտ է դառնում, որ ես գործել իմ պաշտպանյալի շահերից ելնելով՝ օգտագործելով օրենքով չարգելված բոլոր միջոցները:
Հարց 4. *Ինչու չեք միջնորդել դանակի շեղբի վնասվածքի հետ կապված նշանակել դատաբժշկական փորձաքննություն:*
Պատասխան- Ես ներգրավվել եմ որպես պաշտպան դեպքի հաջորդ օրը, երբ պաշտպանյալս արդեն ցուցմունք էր տվել, սակայն ինձ չասաց, որ իր ձեռքի մեջ առկա է վնասվածք:
Հարց 5. Ստանձնելով Վ. Գյոզալյանի պաշտպանությունը, արդյոք չեք ծանոթացել նրա կողմից տրված ցուցմունքներին և ամբողջ գործի ընթացքում չեք իմացել ձեռքի վնասվածքի մասին:

Պատասխան- Ծանոթացել եմ ցուցմունքներին և հետագա ցուցմունքների ժամանակ ներկա եմ գտնվել, քանի որ ի սկզբանե մեղադրանք էր առաջադրված 112 հոդվածի 1-ին մասով, էական չէր, թե այդ հարվածի ընթացքում ձեռքը վնասված էր, թե ոչ:

Հարց 6. 6 ամիս անց արարքը վերաորակվել է, ինչու՞ այդ ժամանակ չեք պահանջել ձեռքի ափի դատաբժշկական փորձաքննություն նշանակել, որպեսզի երևար, որ եթե ձեռքի ափում կա վնասվածք, ապա ձեր պաշտպանյալը ձեռքի ափով բռնելով դանակի շեղբը՝ սպանելու դիտավորություն չի ունեցել:

Պատասխան- Կարծում եմ, որ 6 ամիս անց վնասվածքը եթե առկա էլ լիներ, ապա չէր երևա: Ինչպես նաև դա տվյալ դեպքի հետ կապելն էլ արդեն անհնար կլիներ:

Հարց 5. *Ինչու արարքի վերաորակմանը անմիջապես չեք անդրադարձել, այլ՝ միայն նախաքննության ավարտից հետո:*

Պատասխան- Ես անդրադարձել եմ այդ հարցին ինչպես նշեցի, որի արդյունքն էլ այն էր, որ նախաքննության ընթացքում մեղադրանքի ծավալից հանվեց անձին ազատությունից զրկելու հոդվածը: Իսկ միջնորդությունը արել եմ, երբ ավարտվել է նախաքննությունը և ինձ թույլ են տվել ծանոթանալու քրեական գործի ամբողջ նյութերին:

Հարց 5. *Ինչու նախաքննության մարմնից չեք վերցրել քրեական գործի նյութերի պատճենները, որն, ի դեպ, պետք է ձեզ տրամադրվեր անվճար:*

Պատասխան- Ես քրեական գործի ավարտից հետո ամբողջությամբ ծանոթացել եմ քրեական գործի նյութերին և պահանջել եմ և ինձ տրամադրվել է այն նյութերը, որը գտել եմ, որ ինձ անհրաժեշտ են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ես մասնակցել ողջ նախաքննությամ գործընթացին, ինձ ավելին անհրաժեշտ չէր, ի տարբերություն Աննա Թամազյանի, որը ներգրավվել էր վերաքննիչ դատարանում և ծանոթ չէր գործի նյութերին:

Պատասխանողը Խորհրդին տվել է նույնաբովանդակ բանավոր բացատրություն:

<u>3.3 Վկաների ցուցմունքներ.</u>

Նախապատրաստողի կաղմից բացատրություն է վերցվել մեղադրյալ Վռամ Գյոզալյանի հայր՝ Վարազդատ Գյոզալյանից ևմեղադրյալ Վռամ Գյոզալյանի մայր՝ Ժաննա Ստեփանյանից, ընդ որում՝ ներկա են եղել նաև Դիմողը և փաստաբան Արտակ Քոչարյանը, որոնց նույնպես այդ ընթացքում հարցեր են տրվել:

Հարց մեղադրյալ Վռամ Գյոզալյանի հորը՝ Վարազդատ Գյոզալյանին և մորը՝ Ժաննա Ստեփանյանին՝

Ձեր որդու ձեռքի մեջ եղե՞լ է վնասվածք, թե ոչ: Եթե այո, ապա ինչպես է այն ստացել:

Պատասխան- *Վռամ Գյոզալյանի մայր՝ Ժաննա Ստեփանյան-* Դեպքից անմիջապես հետո տղաս վազեց տուն, նրա ձեռքի միջից արյունը հոսում էր, ես թաշկինակով փաթաթեցի ձեռքը և նա դուրս եկավ տանից: Մինչ դուրս գալը նա պատմեց, որ վնասվածքը ստացել է այն պատճառով, որ նա տուժող Գ.

Կարապետյանը հայհոյել է իրեն և իր ծնողներին, որի հետևանքով ինքը իր մոտ գտնվող դանակով հարվածել է տուժողին և դանակի շեղբը պահել է իր ափի մեջ, որի հետևանքով էլ ստացել է այդ վնասվածքը:

Հարց փաստաբան Արտակ Քոչարյանին՝
Ի՞նչ կասեք վերը նշվածի մասին:

Պատասխան- Ես ստանձնել եմ Վ. Գյոզալյանի պաշտպանությունը դեպքի հաջորդ օրը և Վռամը ինձ վնասվածքների մասին ոչինչ չի ասել:

Հարց մեղադրյալ Վռամ Գյոզալյանի հորը՝ Վարազդատ Գյոզալյանին և մորը՝ Ժաննա Ստեփանյանին՝
Ինչու եք դժգոհ Արտակ Քոչարյանից որպես փաստաբան:

Պատասխան- *Վռամ Գյոզալյանի հայր՝ Վարազդատ Գյոզալյան-* Ես դժգոհ չեմ, քանի որ Արտակ Քոչարյանը իր մասնագիտական և մարդկային հնարավորությունների սահմաններում ամեն ինչ արել է:

Վռամ Գյոզալյանի մայր՝ Ժաննա Ստեփանյան- Եթե Արտակ Քոչարյանը ժամանակին գիտակցելով դատաբժշկական փորձաքննության կարևորությունը՝ պահանջեր այն, ապա իրավապահ մարմինները արարքը որպես սպանության փորձ չէին որակի:

Հարց փաստաբան Աննա Թամազյանին՝
Ինչու՞ եք կարծում, որ փաստաբան Արտակ Քոչարյանը պատշաճ չի իրականացրել իր պաշտպանյալի շահերի պաշտպանությունը:

Պատասխան- Փաստաբանը ստանձնելով պաշտպանությունը, քանի որ մասնագետն ինքն է, ոչ թե պաշտպանյալը, պարտավոր է իր պաշտպանյալի շահերից ելնելով, թեկուզ և աննշան թվացող ապացույցը հիմնավորել, արձանագրել, ինչպես նաև նախաքննության մարմնի ուշադրությունը հրավիրել այդ փաստի վրա, քանի որ ելնելով փորձից և կանխատեսելու ունակությունից, որ մեղադրական կողմը ամեն ինչ տվյալ պարագայում թեկուզ աննշան դեպքերը կամ փաստերը աշխատում է օգտագործել մեղավորությունը հիմնավորելու կամ արհեստական ապացույցներ ստեղծելու համար, որպեսզի գործը հետագայում դատարան մտնելուց պաշտպանական կողմը «չջարդի» մեղադրանքը: տվյալ պարագայում, թեկուզ և տվյալ պահին աննշան թվացող մարմնական վնասվածքը պետք է դատաբժշկին ներկայացվեր, նամանավանդ, եթե փաստաբանը արդեն իսկ գիտեր 112 և 104 հոդվածների մոտ լինելը, ինչպես նաև կրկին գործի հանգամանքներից ելնելով, ծանոթանալով փորձաքննության եզրակացությանը, որտեղ նշված է, որ մեքենայի մեջ բացի տուժող Գ. Կարապետյանի արյունից նաև այլ արյան հետքեր կան հետևի նստատեղի և դռան վրա, այլ անձի արյան հետքեր, պետք է պահանջեր, որպեսզի, պարզվեր, թե ում է պատկանում այդ արյունը: Եթե փորձաքննություն անցկացվեր մեքենայի արյան և պարզվեր, որ դա Վռամ Գյոզալյանի արյունն է, ապա մենք արդեն իսկ փաստերով դատարանին

ներկայացրած կլինեինք, որ Վռամը իսկապես բռնած է եղել դանակի շեղբից, ինչ հետևանքով ստացել է արյունահոսող վնասվածք, ուստի և չի ցանկացել սպանել տուժող Գ. Կարապետյանին: Ես չգիտեմ, թե իմ կոլեգան ինչպես է կառուցել իր մարտավարությունը, բայց քրեական գործ վարույթ ընդունելով, ի սկզբանե պետք է ծանոթանար ողջ քրեական գործի նյութերին, քանի որ ելնելով պրակտիկայից, նախաքննական մարմինը բնավորություն ունի մեղադրանքը հիմնավորելու համար գործի մեջ տարբեր փաստաթղեր կպցնելու, մասնավորեպս տուժող Գ. Կարապետյանի առողջական վիճակի վերաբերյալ: Տվյալ գործում կա 4 հատ տեղեկանք, որը տվել է հերթապահ բժիշկը Գ. Կարապետյանի ահավոր ծանր, վերակենդանացման անգիտակից և թմրաքունի մեջ գտնվելու մասին, սակայն իրականում այդպես չէ, քանի որ առկա է դատաքննության ժամանակ տրված ցուցմունքներ դատաբժշկի և թոքաբան մասնագետի, որոնք հերքում են այդ փաստը: Արտակ Քոչարյանը պարտավոր էր նախաքննության ավարտից հետո՝ ծանոթանալով քրեական գործի նյութերին, արդեն իսկ իմանալով որ 112 հոդվածի 1-ին մասը վերաորակվել է 34-104 հոդվածի, առանձնակի ուշադրություն դարձներ գործում եղած «աննշան» ապացույցներին, ինչպես նաև քրեական գործում ևս մեկ արձանագրություն կար՝ անձին ձերբակալելու և զննում կատարելու մասին, որը դատարկ էր /միայն առկա էին քննիչի և Վռամ Գյոզալյանի ստորագրությունները/, և քանի որ արդեն իսկ գործը դատարան էր գնում 34-104 մեղադրական եզրակացությամբ, ուրեմն այդ բոլոր «աննշան» ապացույցները արդեն իսկ գործով նշանակալից փաստեր են դառնում, վերաքննիչ դատարանում երբ միջնորդեցի գործում եղած 3 բժիկների՝ հերթապահ բժշկի, բուժող վիրաբույժի և դատաբժշկի ցուցմունքների հակասությունը պարզելու համար հրավիրել դատարան և լսել հերթապահ բժշկին, որը որ լույս կսփռեր գործին, քանի որ հենց առաջինը նա է ընդունել տուժողին և տվել է այդպիսի տեղեկանքներ: Միջնորդությունս մերժվեց դատարանի կողմից՝ պատճառաբանելով, որ թե ամբաստանյալը, և թե պաշտպանը բավարար ժամանակ և հնարավորություն են ունեցել, ոչ ոք չի խոչընդոտել վերջիններիս կողմից իրենց պաշտպանությունը իրականացնելուն և դատարանը նպատակահարմար չի գտնում նոր վկա կանչելուն:

Հարց փաստաբան Արտակ Քոչարյանին՝
Ի՞նչ կասեք վերը նշվածի մասին/Աննա Թամազյանի/:

Պատասխան- Քանի որ քրեական գործում առկա է փորձագետի եզրակացություն, որով հիմնավորվել է, որ տուժողին հասցված վնասվածքը դասվում է ծանր մարմնական վնասվածների դասին, այդ իսկ պատճառով Աննա Թամազյանի նշված 3 բժիշկների տված տեղեկանքներում առկա հակասությունները էական նշանակություն չէին կարող ունենալ և որևէ փաստ չէին կարող ապացուցել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2015 թվականի հունիսի 26 -ին Անահիտ Սարգսյանի կողմից կազմվել է եզրակացություն և 29.06.2015 թվականին հանձնվել ՀՀ Փաստաբանների պալատ:
Եզրակացությամբ նշվել է "Փաստաբան Արտակ Քոչարյանը, ստանձնելով Վռամ Գյոզալյանի շահերի պաշտպանությունը, քրեական գործի քննության ընթացքում մասնակցել է քննչական և դատավարական այն գործողություններին, որոնց նա, ըստ օրենքի, պարտավոր էր մասնակցել իբրև պաշտպան՝այդ ընթացքում պատշաճ կատարելով պաշտպանի պարտականությունները: Մասնավորապես. մասնակցել է մեղադրյալի բոլոր հարցաքննություններին, ծանոթացել փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին, ապա նաև՝ փորձագետի եզրակացություններին, ինչպես քննիչի հետ, այնպես էլ առանձին, կոնֆիդենցիալ տեսակցել է մեկուսարանում գտնվող պաշտպանյալին, իսկ մեղադրանքը փոփոխվելուց հետո համապատասխան միջնորդագիր է ներկայացրել վերադաս դատախազին՝դրանում հստակ ընդգծելով իր պաշտպանյալի կողմից տուժողին սպանելու դիտավորություն չունենալու հանգամանքը՝միաժամանակ վկայակոչելով դա հիմնավորող ուղղակի ապացույցները: Նախաքննությունն ավարտվելուց հետո նախաքննական մարմնից պահանջել ու ստացել այն փաստաթղթերի պատճենները, որոնք անհրաժեշտ և բավարար է համարել պաշտպանությունը շարունակելու համար: Դատարանում, Ա.Քոչարյանը նույնպես անգործություն չի դրսևորել և գործելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պաշտպանի լիազորությունների շրջանակում, փորձել է հասնել մեղադրանքի փոփոխման:
Ինչ վերաբերում է փաստաբան Աննա Թամազյանի դիտարկումներին, ապա՝

1. *Նախ յուրաքանչյուր փաստաբան ստանձնելով անձի շահերի պաշտպանությունը դեպքի և դրան առնչվող բոլոր հնարավոր փաստական հանգամանքների մասին նախ և առաջ տեղեկանում է իր իսկ պաշտպանյալից և ոչ թե նախաքննության մարմնից: Տվյալ դեպքում ունեցած վնասվածքի մասին Ա.Քոչարյանը պետք է իրազեկվեր իր պաշտպանյալի՝Վ.Գյոզալյանի կողմից և ոչ թե այդ մասին իմանար նրա բացատրությունից, իսկ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն հարուցելու հարցը պաշտպանը լուծում է ելնելով կոնկրետ իրադրությունից և նպատակահարմարությունից:*
2. *Ի սկզբանե քրեական գործը հարուցվել է ՀՀ քր. օր-ի 112 հոդվածով և մեղադրանքը առաջադրվել է այդ նույն հոդվածով ելնելով այն բանից, որ տուժողի վնասվածքը թափանցող է, իսկ դրա աստիճանը՝ ծանր: Նման ապացույցի առկայության պայմաններում արդեն էական չէ,թե տուժողը որքան ժամանակ է մնացել հիվանդանոցում և ինչ բուժում է ստացել: Առկա է դատաբժշկի եզրակացությունը, որով էլ որոշվում է վնասվածքի ծանրության աստիճանը:*
3. *Վաշխառության հատկանիշներով հարուցված գործը կարճվել է մեղադրյալ Վ.Գյոզալյանի կողմից տուժողի հետ հաշտություն կնքելու հիմքով: Նման պայմաններում պաշտպան Ա.Քոչարյանը իրավունք էլ չուներ բողոքարկեր այդ որոշումը, քանի որ դրա հիմքում իր իսկ պաշտպանյալի կամարտահայտությունն է:*

4. Մեղադրանքը փոփոխվելուց հետո պաշտպան Ա.Քոչարյանը հիմնավոր և պատճառաբանված միջնորդություն է ներկայացրել վերադաս դատախազին՝ինքնուրույն որոշելով դրա ներկայացման պահը: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում այս կամ այն միջնորդությունը անելու կոնկրետ ժամանակ: Դա,պաշտպաններն անում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ելնելով իրենց ընտրած մարտավարության բնույթից:"

Հաշվի առնելով վերոգրյալը,Նախապատրաստողը գտնում է, որ տվյալ գործով մեղադրյալ Վռամ Գյոզալյանի շահերի պաշտպան Արտակ Քոչարյանը չի թերացել իր պարտականությունները կատարելիս և դրանք իրականացրել է բարեխղճորեն ու օբյեկտիվ:

2015 թվականի հուլիսի 01-ին 10-ին թի վ 86-Ա/ԿԳ-15025 կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանին (նիստը նախագահող):

Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությանը առարկություն չի ներկայացվել:

09.07.2015 թվականին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 07.09.2015թ-ին ժամը 19:15-ին ք.Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում:

07.09.2015թ-ին նիստը հետաձգվել է: Նիստի օր է նշանակվել 2015 թվականի հոկտեմբերի 28-ին -ին ժամը 18:45-ին ք.Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում:

28.10.2015թ-ին նիստը հետաձգվել է: Նիստի օր է նշանակվել 2015 թվականի դեկտեմբերի 08-ին -ին ժամը 18:35-ին ք.Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

<u>Փաստաբան Արտակ Քոչարյանը,</u> ստանձնելով Վռամ Գյոզալյանի շահերի պաշտպանությունը, քրեական գործի քննության ընթացքում մասնակցել է քննչական և դատավարական այն գործողությունների: Մասնավորապես. մասնակցել է մեղադրյալի բոլոր հարցաքննություններին, ծանոթացել փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին, ապա նաև՝ փորձագետի եզրակացություններին, ինչպես քննիչի հետ, այնպես էլ առանձին, կոնֆիդենցիալ տեսակցել է մեկուսարանում գտնվող

պաշտպանյալին, իսկ մեղադրանքը փոփոխվելուց հետո համապատասխան միջնորդագիր է ներկայացրել վերադաս դատախազին՝դրանում հստակ ընդգծելով իր պաշտպանյալի կողմից տուժողին սպանելու դիտավորություն չունենալու հանգամանքը՝միաժամանակ վկայակոչելով դա հիմնավորող ուղղակի ապացույցները: Նախաքննությունն ավարտվելուց հետո նախաքննական մարմնից պահանջել ու ստացել այն փաստաթղթերի պատճեները, որոնք անհրաժեշտ և բավարար է համարել պաշտպանությունը շարունակելու համար: Դատարանում, Ա.Քոչարյանը գործելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պաշտպանի լիազորությունների շրջանակում, փորձել է հասնել մեղադրանքի փոփոխման:

Ի սկզբանե քրեական գործը հարուցվել է ՀՀ քր. օր-ի 112 հոդվածով և մեղադրանքը առաջադրվել է այդ նույն հոդվածով ելնելով այն բանից, որ տուժողի վնասվածքը թափանցող է, իսկ դրա աստիճանը՝ ծանր:

Վաշխառության հատկանիշներով հարուցված գործը կարճվել է մեղադրյալ Վ.Գյոզալյանի կողմից տուժողի հետ հաշտություն կնքելու հիմքով: Նման պայմաններում պաշտպան Ա.Քոչարյանը իրավունք էլ չուներ բողոքարկեր այդ որոշումը, քանի որ դրա հիմքում իր իսկ պաշտպանյալի կամարտահայտությունն է:

<u>Մեղադրանքը փոփոխվելուց հետո պաշտպան Ա.Քոչարյանը միջնորդություն է ներկայացրել վերադաս դատախազին</u>:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Համաձայն գործում առկա ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար՝ Գևորգ Գևորգյանի կողմից տրված տեղեկանքի փաստաբան Արտակ Քոչարյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 2006 թվականի դեկտեմբերի 05-ին և նրա նկատմամբ՝ 2006-2015թթ ժամանակահատվածում կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ հարուցված վարույթը պետք է կարճել հետևյալ հիմնավորումներով.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի **2.7.2** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Արտակ Քոչարյանը դրսևորել է անգործություն, մասնավորապես՝

- ոչ մի միջոց չի ձեռնարկել գործով համապատասխան ապացույց ձեռք

բերելու, մասնավորապես՝ դատաբժշկական փորձաքննություն անցկացնելու համար.

- անտեսել է այն հանգամանքը, որ ձերբակալվածներին պահելու վայրում Վռամ Գյոզալյանի անձնական խուզարկության և մարմնի զննման ժամանակ նախաքննական մարմինը համապատասխան ձևաթուղթ չի լրացրել.

- չի բողոքարկել վաշխառության հատկանիշներով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Կանոնագրքի **2.6.1** ենթակետի համաձայն՝ ***Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:***

Դիմողը նշել է, որ փաստաբան Արտակ Քոչարյանի կողմից Վռամ Գյոզալյանի պաշտպանությունը ոչ պատշաճ իրականացնելու և իր շահերից չգործելու հետևանքով նախաքննական մարմինը և դատախազությունը «պնդեցրել են» գործում չեղած ապացույցները, իսկ Վռամ Գյոզալյանի վիճակը վատթարացել է և վերջինս 2013 թվականի հուլիսի 10-ից մինչ օրս գտնվում է անազատության մեջ:

Փաստաբան Արտակ Քոչարյանի նախկին վստահորդ Վռամ Գյոզալյանի համար Կանոնագրքի 2.6.1 ենթակետի իմաստով _ ***«նպաստավոր շահ»*** է հանդիսանում քրեական գործի արդարացի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով գործի քննության իրավունքը, որի ընթացքում նաև պաշտպանի պատշաճ և բարեխիղճ աշխատանքի շնորհիվ կարող են ի հայտ գալ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր և ձեռք բերվեն այդ փաստերը հիմնավորող ապացույցներ, քանի որ քրեական դատավարությունում պաշտպանի ներգրավման <u>հիմնական նպատակը</u> մեղադրյալի իրավունքների և շահերի պաշտպանությունն է:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները գտնում է, որ կարգապահական վարույթի ընթացքում՝

- Փաստաբան Արտակ Քոչարյանը, ստանձնելով Վռամ Գյոզալյանի շահերի պաշտպանությունը, քրեական գործի քննության ընթացքում մասնակցել է քննչական և դատավարական այն գործողությունների: Մասնավորապես. մասնակցել է մեղադրյալի բոլոր հարցաքննություններին, ծանոթացել փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին, ապա նաև՝ փորձագետի եզրակացություններին, ինչպես քննիչի հետ, այնպես էլ առանձին, կոնֆիդենցիալ տեսակցել է մեկուսարանում գտնվող պաշտպանյալին, իսկ մեղադրանքը փոփոխվելուց հետո համապատասխան միջնորդագիր է ներկայացրել վերադաս դատախազին՝դրանում հստակ ընդգծելով իր պաշտպանյալի կողմից տուժողին սպանելու դիտավորություն չունենալու հանգամանքը՝միաժամանակ վկայակոչելով դա հիմնավորող ուղղակի ապացույցները: Նախաքննությունն ավարտվելուց հետո նախաքննական մարմնից պահանջել ու ստացել այն փաստաթղթերի պատճենները, որոնք անհրաժեշտ և բավարար է համարել պաշտպանությունը շարունակելու համար: Դատարանում, Ա.Քոչարյանը գործելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պաշտպանի լիազորությունների շրջանակում, փորձել է հասնել մեղադրանքի փոփոխման:Ինչ վերաբերում է փաստաբան Աննա Թամազյանի դիտարկումներին, ապա՝

- Նախ յուրաքանչյուր փաստաբան ստանձնելով անձի շահերի պաշտպանությունը դեպքի և դրան առնչվող բոլոր հնարավոր փաստական հանգամանքների մասին նախ և առաջ տեղեկանում է իր իսկ պաշտպանյալից և ոչ թե նախաքննության մարմնից: Տվյալ դեպքում ունեցած վնասվածքի մասին Ա.Քոչարյանը պետք է իրազեկվեր իր պաշտպանյալի՝Վ.Գյոզալյանի կողմից և ոչ թե այդ մասին իմանար նրա բացատրությունից, իսկ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն հարուցելու հարցը պաշտպանը լուծում է ելնելով կոնկրետ իրադրությունից և նպատակահարմարությունից:
- սկզբանե քրեական գործը հարուցվել է ՀՀ քր. օր-ի 112 հոդվածով և մեղադրանքը առաջադրվել է այդ նույն հոդվածով ելնելով այն բանից, որ տուժողի վնասվածքը թափանցող է, իսկ դրա աստիճանը՝ ծանր: Նման ապացույցի առկայության պայմաններում արդեն էական չէ,թե տուժողը որքան ժամանակ է մնացել հիվանդանոցում և ինչ բուժում է ստացել: Առկա է դատաբժշկի եզրակացությունը, որով էլ որոշվում է վնասվածքի ծանրության աստիճանը:
- Վաշխառության հատկանիշներով հարուցված գործը կարճվել է մեղադրյալ Վ.Գյոզալյանի կողմից տուժողի հետ հաշտություն կնքելու հիմքով: Նման պայմաններում պաշտպան Ա.Քոչարյանը իրավունք էլ չուներ բողոքարկեր այդ որոշումը, քանի որ դրա հիմքում իր իսկ պաշտպանյալի կամարտահայտությունն է:
- Մեղադրանքը փոփոխվելուց հետո պաշտպան Ա.Քոչարյանը հիմնավոր և պատճառաբանված միջնորդություն է ներկայացրել վերադաս դատախազին՝ինքնուրույն որոշելով դրա ներկայացման պահը: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում այս կամ այն միջնորդությունը անելու կոնկրետ ժամանակ: Դա,պաշտպաններն անում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ելնելով իրենց ընտրած մարտավարության բնույթից:

<u>Նշված պայմաններում գործում առկա ապացույցներով հիմնավորված չէ Արտակ Քոչարյանի կողմից վարքագծի Կանոնագրքի 2.6.1 ենթակետի, 2.7.2 ենթակետի պահանջները խախտելու հիմքի առկայությունը;</u>

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2 -րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2 -րդ կետի, 28-րդ հոդվածի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 2015 թվականի ապրիլի 18-ի, թիվ թիվ ԿԳ-15025 որոշմամբ որոշմամբ փաստաբան Արտակ Քոչարյանի (արտոնագիր թիվ նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Արտակ Քոչարյանի կողմից վարքագծի Կանոնագրքի 2.6.1 ենթակետի, 2.7.2 ենթակետի պահանջները***

խախտելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով;

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններ Արտակ Քոչարյանին, Աննա Թամազյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի նիստը նախագահող՝ **Մելանյա Առուստամյան**